ջանիկ փոխումը. միթէ չար բաղդը հալածել հանել էր նորան մինչև Սեպուհի բարձրաբերձ մենարանները. միթէ՞ մարդատեցութիւնն առաջնորդեց մինչև այդ ճգնարանն այն անձին, որ մարդասիրաբար բազմապատիկ տանջանքների և հնգետասանամեայ տարօրինակ բանտարգելութեան դառնութիւնները կրեց՝ մի ամբողջ ազգ փրկելու համար. միթէ՞, վերջապէս, մարդկային ապերախտութի՞ւնը վանեց մղեց նորան բազմամարդ շրջաններից դէպի անմարդաբնակ այրերը, ուր հրեշտակակրօն ծերունին, ի վերջոյ, «փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց». պատմութիւնը գրէթէ լռում է այս հարցերին արժանաւոր պատասխանը տալու։ Բազմաթիւ աւանդութիւններից այսքանը կարելի է իմանալ, որ Ս. Գրիգոր Նիկիոյ ժողովից յետոյ, հօտի հովութիւնն իւր կրտսեր որդուն՝ Ս. Արիստակէսին յանձնելով, հեռացաւ իւր ճգնարանն, ուր սովոր էր մինչ ցայն երբեմն երբեմն առանձնանալ, և այլ ևս չերևցաւ աշխարհին։ Մովսէս Խորենացին բացատրում է թէ Ս. Լուսաւորիչ առանձնական կեանք ընտրեց այն պատճառով, որ սիրեց լեռներ և ամայութիւն և մտքի հանդարտութեամբ ինքն իրեն մէջ կենդրոնանալ, որպէս զի կարողանայ անդբաղապէս խօսել Աստուծոյ հետ։ Անբնական չէ մենաւոր կեանքի այսպիսի մի տենչ ունենալ ծերութեան հասակում։ սակայն Մ. Խորենացու բացատրութիւնը գոհացու-